# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/12

ք. Երևան «20» «04» 2018թ.

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Մ. Մինասյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա.Նալբանդյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

### 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության տարեկան առավելագույն գինը կազմում է 340404 (երեք հարյուր քառասուն հազար չորս հարյուր չորս ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն 2018թ. իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

2019-2020թթ. Ծառայությունների մատուցման դիմաց վճարում իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև Պայմանագրի 7.13 կետի համապատասխան կնքվելիք համաձայնագրով սահմանված վճարման ժամանակացույցով:

### 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն 2019-2020թթ. իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն

ՀՎՀՀ 02505511

ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

Հ/Հ 900011556355

---------------------------------

(ստորագրություն)

Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

<<ԷՅ-Ի-Ջի-Սերվիս>> ՍՊԸ

ք. Երևան, Չարենցի 141ա

«[illegible]ինբանկ» ՓԲԸ

[illegible]7010[illegible]214780130

[illegible]00930884

[illegible] ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

(ստորագրություն)

Հավելված N 4
« 20 » « 04 » 2018թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով պայմանագրի

Գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման թիվ ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/12 պայմանագրի

| Համար | Գործունեության հասցե | Բաժ. համար | Մեկանգամյա ծառայության գումար (դրամ) | Գազահամակարգ | | Գազասպառման ամիսների քանակը | Ծառայություններ ի մատուցման ժամանակացույց | Ծառայության սակագնային նախահաշվի Հավելվածի համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Գազատար (գազահաշվիչից հետո) | Գազասարքեր | | | |
| ԿՄ-01/04 | ք. Երևան, Արմենակյան 133/6 | 17-006095 | 9050 | d20 - 2 գծմ, d25 - 35 գծմ, d32 - 10 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.1 |
| ԿՄ-01/02 | ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ., վարչական շենք12 | 12-006148 | 13656 | d20 - 5 գծմ, d25 - 25 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.2 |
| ԿՄ-01/03 | ք. Երևան, Չնքուշի 7 | 14-006147 | 11584 | d20 - 44 գծմ, d25 - 56 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.3 |
| ԿՄ-01/01 | ք. Երևան, Բաշինջաղյան 100 | 12-006095 | 13664 | d25 - 30 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.4 |
| ԿՄ-01/20 | ք. Թալին, Գայի 1, քաղաքապետարանի վարչ. Շենք | 92-000076 | 12470 | d20 - 3 գծմ, d25 - 3 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.5 |
| ԿՄ-01/09 | ք. Արարատ, Շահումյան 34 | 51-000197 | 7060 | d20 -7.5 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.6 |
| ԿՄ-01/10 | ք. Վեդի, Արարատյան 55 | 51-000198 | 20199 | d32 - 140 գծմ, d40 - 14 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.7 |
| ԿՄ-01/11 | ք. Արտաշատ, Իսակովի 47 | 52-000372 | 14333 | d20 - 45 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.8 |
| ԿՄ-01/12 | ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 4 | 53-000318 | 16151 | d15 - 2 գծմ, d20 - 81 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.9 |
| ԿՄ-01/14 | ք. Արմավիր, Աբովյան 137/1 | 61-000278 | 21767 | d20 - 3 գծմ, d25 - 10 գծմ, d32 – 67 գծմ | ՋԿ – 3 հատ | 6 | Նոյեմբեր | 4.10 |
| ԿՄ-01/15 | գ. Բաղրամյան Բաղրամյան1 | 63-000033 | 12650 | d15 - 4 գծմ, d20 - 6 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.11 |
| ԿՄ-01/13 | ք. Ճամբարակ, Պ. Սևակի 7 | 57-000066 | 12752 | d20 - 12 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.12 |
| ԿՄ-01/23 | ք. Մարտունի, Շահումյան 2 | 82-000235 | 9143 | d15 - 1 գծմ, d20 - 50 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.13 |
| ԿՄ-01/18 | ք. Վարդենիս, Ռոմանի 7 | 83-000091 | 13174 | d15 - 6 գծմ, d20 - 15 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.14 |
| ԿՄ-01/19 | ք. Վանաձոր, Նժդեհի 14 | 31-. | 18663 | d25 - 15 գծմ, d32 - 95 գծմ, d57 – 15 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.15 |
| ԿՄ-01/17 | ք. Տաշիր, Ջահուկյան 4 | 35-000042 | 7466 | d15 - 1 գծմ, d20 - 15 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.16 |
| ԿՄ-01/08 | ք. Եղվարդ 2401, Կնունյանց 1-ին նրբ. 38/1 | 46-000109 | 12321 | d20 - 3 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.17 |
| ԿՄ-01/07 | ք. Չարենցավան, Աբովյան 8 | 42-000167 | 16106 | d20 - 3 գծմ, d32 - 73 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.18 |
| ԿՄ-01/22 | Շիրակի մարզ, գ. Ամասիա, փ.25 շ.4 | 27-000058 | 18189 | d15 - 3 գծմ, d25 - 8 գծմ | ՋԿ – 2 հատ, ԳՕ-1 հատ | 12 | Նոյեմբեր, Ապրիլ | 4.19 |
| ԿՄ-01/06 | գ. Աշոցք Հրապարակ 1 | 27-000022 | 6800 | d25 - 2 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.20 |
| ԿՄ-01/21 | ք. Արթիկ, Ազատության հապարակ 1/2 | 23-000047 | 12409 | d15 - 5 գծմ | ՋԿ – 1 հատ, ԳՕ-1 հատ | 12 | Նոյեմբեր, Ապրիլ | 4.21 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԿՄ-01/05 | ք. Մարալիկ Մաղաքյան 1 | 25-000011 | 14906 | d20 - 5 գծմ, d32 - 48 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.22 |
| ԿՄ-01/16 | ք. Նոյեմբերյան, Անդրանիկի 3 | 73-000088 | 15293 | d15 - 3 գծմ, d32 - 49 գծմ, d40 - 8 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.23 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
<<ԷՅ-Ի-Ջի-Սերվիս>> ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 141ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470102214780130
ՀՎՀՀ 00930884

...ԱԼԲԱՆԴՅԱՆ
(ստորագրություն)

Հավելված N 1
« 20 » « 04 » 2018թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | Հասցեն | Ժամկետը |
| 1. | 76131100-1 | Գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների արտաքին զննում, զոդակարերի, պարուրակային միացումների կիպության ստուգում, իսկ գազի արտահոսքի առկայության դեպքում՝ դրա վերացում,գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման, օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի համար նախատեսված բացվածքների զննում, ծխաօդատար ուղիների քարշի ստուգում, գազօգտագործող սարքավորումների աշխատանքի ստուգումը՝ գործարկված վիճակում:<br>Անհրաժեշտության դեպքում բաց այրման խցով գազօգտագործող սարքավորումների այրման պրոցեսի կարգավորում,գազասպառման կենցաղային համակարգի անվտանգ օգտագործման վերաբերյալ սպասարկման պահին Օբյեկտում ներկա գտնվող Պատվիրատուի գազասպառման համակարգի հետ առնչություն ունեցող աշխատակիցների հրահանգավորում:<br>սակագներով,որոնք սահմանվում են պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N4 հավելվածով և N 4.1-4.23 հավելվածներում:<br>Ծառայության մատուցումը կատարվում է Պատվիրատուի պահանջի հիման վրա N4 հավելվածում նշված հասցեների համար:<br>Ծառայությունները կատարողի կողմից իրականացվում են ըստ 4.1-4.23 հավելվածների:<br>Գազասպառման ամիսների քանակ՝ համաձայն N 4.1-4.23 հավելվածների:<br>Կանչերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ երկուշաբթի-ուրբաթ ժամը 09[00]-17[00] , 010-20-13-91 հեռախոսահամարներով: | դրամ | 340.404 երեք հարյուր քառասուն հազար չորս հարյուր չորս | 1 | ք. Երևան, Նալբանդյան 13 | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 15-ը: |

*Հավելված N 2*
*«20» «06» 2018 թ. կնքված*
*ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով պայմանագրի*

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| h/h | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 76131100-1 | գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայություններ | - | 119141 | 119141 | 119141 | 204242 | 204242 | 204242 | 340404 | 340404 | 340404 | 340404 |

*/Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով,*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

---------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<ԷՅ-Ի-Ջի-Սերվիս>> ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 141ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470102214780130
ՀՎՀՀ 00930884

---------------------ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
/ստորագրություն/

*Հավելված 3*
*« 20 » « 04 » 2018 թ. կնքված*
*ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ

______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
______________________________
հվհհ _________________________

Պատվիրատու

______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ___________________________
______________________________
հվհհ_________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________

*Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «________________» 20 թ. դուրս գրած N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝*

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

______________________________
ստորագրություն

______________________________
ազգանուն, անուն

Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«20» «04» 2018 թ. կնքված*
*ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. __________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

________________
ազգանուն, անուն

________________
ստորագրություն

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## 2018 թվականի ապրիլի 20-ին կնքված N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք.Երևան «13» 02 2019թ.

Սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Վ. Բաբաջանյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ ընկերություն), ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ա. Նալբանդյանի, մյուս կողմից, միաժամանակյա հիշատակման դեպքում այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և հիմք ընդունելով Կողմերի միջև 20.04.2018թ. կնքված N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/12 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5-րդ կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը՝ հավելված N1-ը հաստատել հետևյալ նոր խմբագրմամբ համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի:

1.2 Պայմանագրի ընդհանուր գինը ավելացնել սահմանելով 382000 (երեք հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ՝ հաստատել Պայմանագրի 4.1 կետը հետևյալ նոր խմբագրմամբ՝ «4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության տարեկան առավելագույն գինը կազմում է 382000 (երեք հարյուր ութսուներկու հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.3 Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել 2019թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 2-ի:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են (6) վեց թերթից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| Սոցիալական ապահովության ծառայություն | «ԷՅ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | ք. Երևան, Չարենցի 141ա |
| Հ/Հ 900011556355 | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| ՀՎՀՀ 02505511 | Հ/Հ 2470102214780130 |
| | ՀՎՀՀ 00930884 |
| Վ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ | [illegible]ԲԱՆԴՅԱՆ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
« 20 » «ապրիլի » 2018թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-13/12 ծածկագրով պայմանագրի հիման վրա
« 13 » « 02 » 2019թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| h/h | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | Հասցեն | Ժամկետը |
| 1. | 76131100-1 | գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների արտաքին զննում, զոդակարերի, պարուրակային միացումների կիպության ստուգում, իսկ գազի արտահոսքի առկայության դեպքում՝ դրա վերացում,գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման, օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի համար նախատեսված բացվածքների զննում, ծխաօդատար ուղիների քարշի ստուգում, գազօգտագործող սարքավորումների աշխատանքի ստուգումը՝ գործարկված վիճակում: Անհրաժեշտության դեպքում բաց այրման խցով գազօգտագործող սարքավորումների այրման պրոցեսի կարգավորում,գազասպառման կենցաղային համակարգի անվտանգ օգտագործման վերաբերյալ սպասարկման պահին Օբյեկտում ներկա գտնվող Պատվիրատուի գազասպառման համակարգի հետ առնչություն ունեցող աշխատակիցների հրահանգավորում:<br>սակագներով,որոնք սահմանվում են պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N4 հավելվածով և N 4.1-4.26 հավելվածներում:<br>Ծառայության մատուցումը կատարվում է Պատվիրատուի պահանջի հիման վրա N4 հավելվածում նշված հասցեների համար:<br>Ծառայությունները կատարողի կողմից իրականացվում ըստ 4.1-4.26 հավելվածների:<br>Գազասպառման ամիսների քանակ՝ համաձայն N 4.1-4.26 հավելվածների:<br>Կանչերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ երկուշաբթի-ուրբաթ ժամը 09⁰⁰-17⁰⁰ , 010-20-13-91 հեռախոսահամարներով: | դրամ | 382000 | 1 | ք. Երևան, Նալբանդյան 13, (հավելված 4-ում նշված հասցեներ) | Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020թ. դեկտեմբերի 15-ը: |

*«Հավելված N 4*
*« 20 » «ապրիլի» 2018թ. կնքված*
*ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով պայմանագրի»*

Գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման թիվ ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/12 պայմանագրի

| Համար | Գործունեության հասցե | Բաժ. համար | Միանգամյա ծառայության գումար (դրամ) | Գազահամակարգ | | Գազասպառման ամիսների քանակը | Ծառայությունների մատուցման ժամանակացույց | Ծառայության առավելագույն նախահաշվի Հավելվածի համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Գազատար (գազահաշվիչից հետո) | Գազասարքեր | | | |
| ԿՄ-01/04 | ք. Երևան, Արմենակյան 133/6 | 17-006146 | 9050 | d20 - 2 գծմ, d25 - 35 գծմ, d32 - 10 գծմ | ՁԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.1 |
| ԿՄ-01/02 | ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ., վարչական շենք12 | 12-006148 | 13656 | d20 - 5 գծմ, d25 - 25 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.2 |
| ԿՄ-01/03 | ք. Երևան, Չնքուշի 7 | 14-006147 | 11584 | d20 - 44 գծմ, d25 - 56 գծմ | ՁԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.3 |
| ԿՄ-01/01 | ք. Երևան, Բաշինջաղյան 100 | 12-006095 | 13664 | d25 - 30 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.4 |
| ԿՄ-01/20 | ք. Թալին, Գայի 1. քաղաքապետարանի վարչ. Շենք | 92-000076 | 12470 | d20 - 3 գծմ, d25 - 3 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.5 |
| ԿՄ-01/09 | ք. Արարատ, Շահումյան 34 | 51-000197 | 7060 | d20 -7.5 գծմ | ՁԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.6 |
| ԿՄ-01/10 | ք. Վեդի, Արարատյան 55 | 51-000198 | 20199 | d32 - 140 գծմ, d40 - 14 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.7 |
| ԿՄ-01/11 | ք. Արտաշատ, Իսակովի 47 | 52-000372 | 14333 | d20 - 45 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.8 |
| ԿՄ-01/12 | ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 4 | 53-000318 | 16151 | d15 - 2 գծմ, d20 - 81 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.9 |
| ԿՄ-01/14 | ք. Արմավիր, Աբովյան 137/1 | 61-000278 | 21767 | d20 - 3 գծմ, d25 - 10 գծմ, d32 – 67 գծմ | ՁԿ – 3 հատ | 6 | Նոյեմբեր | 4.10 |
| ԿՄ-01/15 | գ. Բաղրամյան, Բաղրամյան1 | 63-000033 | 12650 | d15 - 4 գծմ, d20 - 6 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.11 |
| ԿՄ-01/13 | ք. Ճամբարակ, Պ. Սևակի 7 | 57-000066 | 12752 | d20 - 12 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.12 |
| ԿՄ-01/23 | ք. Մարտունի, Շահումյան 2 | 82-000235 | 9143 | d15 - 1 գծմ, d20 - 50 գծմ | ՁԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.13 |
| ԿՄ-01/18 | ք. Վարդենիս, Ռոմանի 7 | 83-000091 | 13174 | d15 - 6 գծմ, d20 - 15 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.14 |
| ԿՄ-01/19 | ք. Վանաձոր, Նժդեհի 14 | 31-000261 | 18663 | d25 - 15 գծմ, d32 - 95 գծմ, d57 – 15 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.15 |
| ԿՄ-01/17 | ք. Տաշիր, Ջահուկյան 4 | 35-000042 | 7466 | d15 - 1 գծմ, d20 - 15 գծմ | ՁԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.16 |
| ԿՄ-01/08 | ք. Եղվարդ 2401, Կնունյանց 1-ին նրբ. 38/1 | 46-000109 | 12321 | d20 - 3 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.17 |
| ԿՄ-01/07 | ք. Չարենցավան, Աբովյան 8 | 42-000167 | 16106 | d20 - 3 գծմ, d32 - 73 գծմ | ՁԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.18 |
| ԿՄ-01/22 | Շիրակի մարզ. գ. Ամասիա. փ.25 շ.4 | 27-000058 | 18189 | d15 - 3 գծմ, d25 - 8 գծմ | ՁԿ – 2 հատ, ԳՕ-1 հատ | 12 | Նոյեմբեր, Մայիս | 4.19 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԿՄ-01/06 | գ. Աշոցք, Դրապարակ 1 | 27-000022 | 6800 | d25 - 2 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.20 |
| ԿՄ-01/21 | ք. Արթիկ. Ազատության հրապարակ 1/2 | 23-000047 | 12409 | d15 - 5 գծմ | ՋԿ – 1 հատ, ԳՕ-1 հատ | 12 | Նոյեմբեր, Մայիս | 4.21 |
| ԿՄ-01/05 | ք. Մարալիկ, Մաղաքյան 1 | 25-000011 | 14906 | d20 - 5 գծմ, d32 - 48 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.22 |
| ԿՄ-01/16 | ք. Նոյեմբերյան, Անդրանիկի 3 | 73-000088 | 15293 | d15 - 3 գծմ, d32 - 49 գծմ, d40 - 8 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.23 |
| ԿՄ-01/24 | ք. Սպիտակ, Ռփյան 54 | 36-000101 | 12582 | d15 – 1.5 գծմ, d20 - 7 գծմ | ՋԿ – 1 հատ, ԳՕ-1 հատ | 12 | Նոյեմբեր, Մայիս | 4.24 |
| ԿՄ-01/25 | ք.Գավառ, Զ.Անդրանիկ | 81-000218 | 7816 | d20 – 15 գծմ, d25 - 8 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.25 |
| ԿՄ-01/26 | ք.Երևան, Բատիկյան փ 99 շենք1 | 16-007615 | 8616 | d32 – 27 գծմ, d57-10 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.26 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011556355

Վ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԷՅ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 141ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470102214780130
ՀՎՀՀ 00930884

Ա. ՂԱԼԲԱՆԴՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« 20 » «ապրիլի » 2018թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով պայմանագրի հիման վրա
« 13 » « 02 » 2019թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 76131100-1 | գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման ծառայություններ | 38200 | 38200 | 133700 | 133700 | 133700 | 229200 | 229200 | 229200 | 382000 | 382000 | 382000 | 382000 |

/Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով.

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

Վ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԷՅ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 141ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470102214780130
ՀՎՀՀ 00930884

Ա. ԱԼԱԲԱՆԴՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

**2018 թվականի ապրիլի 20-ին կնքված N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք.Երևան «07» «մարտի» 2020թ.

Սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Հ. Գևորգյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ն (այսուհետ՝ ընկերություն), ի դեմս ընկերության գլխավոր տնօրեն Ա. Նալբանդյանի, մյուս կողմից, միաժամանակյա հիշատակման դեպքում այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և հիմք ընդունելով Կողմերի միջև 20.04.2018թ. կնքված N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/12 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5-րդ կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը՝ հավելված N1-ը հաստատել հետևյալ նոր խմբագրմամբ համաձայն սույն համաձայնագրի հավելված 1-ի:

1.2 Պայմանագրի ընդհանուր գինը ավելացնել սահմանելով 434873 (չորս հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ՝ հաստատել Պայմանագրի 4.1 կետը հետևյալ նոր խմբագրմամբ՝ «4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության տարեկան առավելագույն գինը կազմում է 434873 (չորս հարյուր երեսունչորս հազար ութ հարյուր յոթանասուներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

1.3 Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել 2020թ. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված 2-ի:

1.4 Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածը Ծառայության և Կատարողի միջև կնքվող պայմանագրի պայմանները կարող են կիրառվել մինչև պայմանագիր կնքելն իրենց միջև 2020թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայությունների մատուցման Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են (6) վեց թերթից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511

-------------------------------- Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

«ԷՅ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 141ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470102214780130
ՀՎՀՀ 00930884

Ա. ՋԱՂԱԲԱՆԴՅԱՆ
(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված N 1*
*« 20 » «ապրիլի » 2018թ. կնքված*
*ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով պայմանագրի հիման վրա*
*«07» «02» 2020թ. կնքված թիվ 2 համաձայնագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հ/հ | Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Տեխնիկական բնութագիրը | Չափման միավորը | Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ | Ընդհանուր քանակը | Մատուցման | |
| | | | | | | Հասցեն | Ժամկետը |
| 1. | 76131100-1 | գազատար խողովակների և գազօգտագործող սարքավորումների արտաքին զննում, զոդակարերի, պարուրակային միացումների կիպության ստուգում, իսկ գազի արտահոսքի առկայության դեպքում՝ դրա վերացում,գազասարքերի ծխատար խողովակների հավաքակցման, ծխատար ուղուն միացման, օդափոխության և այրման համար անհրաժեշտ օդաքանակի ներհոսքի համար նախատեսված բացվածքների զննում, ծխաօդատար ուղիների քարշի ստուգում, գազօգտագործող սարքավորումների աշխատանքի ստուգումը՝ գործարկված վիճակում:<br>Անհրաժեշտության դեպքում բաց այրման խցով գազօգտագործող սարքավորումների այրման պրոցեսի կարգավորում,գազասպառման կենցաղային համակարգի անվտանգ օգտագործման վերաբերյալ սպասարկման պահին Օբյեկտում ներկա գտնվող Պատվիրատուի գազասպառման համակարգի հետ առնչություն ունեցող աշխատակիցների իրահանգավորում:<br>սակագներով,որոնք սահմանվում են պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող N4 հավելվածով և N 4.1-4.26 հավելվածներում:<br>Ծառայության մատուցումը կատարվում է Պատվիրատուի պահանջի հիման վրա N4 հավելվածում նշված հասցեների համար:<br>Ծառայությունները կատարողի կողմից իրականացվում ըստ 4.1-4.30 հավելվածների:<br>Գազասպառման ամիսների քանակ՝ համաձայն N 4.1-4.26 հավելվածների:<br>Կանչերն ընդունվում են աշխատանքային օրերին՝ երկուշաբթի-ուրբաթ ժամը 09⁰⁰-17⁰⁰ , 010-20-13-91 հեռախոսահամարներով: | դրամ | 434873 (չորս հարյուր երեսունչ որս հազար ութ հարյուր յոթանաս ուներեք) | 1 | ք. Երևան, Նալբանդյան 13, (հավելված 4-ում նշված հասցեներ) | **Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև՝ 31.12.2020թ** (Պայմանագրի 7.15 կետի համաձայն պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագիր կնքելը Ծառայության և Կատարողի միջև 2020թ. հունվարի 1-ից փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ:) |

*«Հավելված N 4*
*« 20 » «ապրիլի» 2018թ. կնքված*
*ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով պայմանագրի»*

Գազասպառման կենցաղային համակարգի տեխնիկական սպասարկման և իրահանգավորման թիվ ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/12 պայմանագրի

| Համար | Գործունեության հասցե | Բաժ. համար | Մեկանգամյա ծառայության գումար (դրամ) | Գազահամակարգ | | Գազասպառման ամիսների քանակը | Ծառայություններ ի մատուցման ժամանակացույց | Ծառայության սակագնային նախահաշվի Հավելվածի համարը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Գազատար (գազահաշվիչից հետո) | Գազասարքեր | | | |
| ԿՄ-01/04 | ք. Երևան, Արմենակյան 133/6 | 17-006146 | 9050 | d20 - 2 գծմ, d25 - 35 գծմ, d32 - 10 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.1 |
| ԿՄ-01/02 | ք. Երևան, Դավթաշեն 3-րդ թաղ., վարչական շենք12 | 12-006148 | 13656 | d20 - 5 գծմ, d25 - 25 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.2 |
| ԿՄ-01/03 | ք. Երևան, Չնքուշի 7 | 14-006147 | 11584 | d20 - 44 գծմ, d25 - 56 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.3 |
| ԿՄ-01/01 | ք. Երևան, Բաշինջաղյան 100 | 12-006095 | 13664 | d25 - 30 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.4 |
| ԿՄ-01/20 | ք. Թալին, Գայի 1, քաղաքապետարանի վարչ. Շենք | 92-000076 | 12470 | d20 - 3 գծմ, d25 - 3 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.5 |
| ԿՄ-01/09 | ք. Արարատ, Շահումյան 34 | 51-000197 | 7060 | d20 -7.5 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.6 |
| ԿՄ-01/10 | ք. Վեդի, Արարատյան 55 | 51-000198 | 20199 | d32 - 140 գծմ, d40 - 14 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.7 |
| ԿՄ-01/11 | ք. Արտաշատ, Իսակովի 47 | 52-000372 | 14333 | d20 - 45 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.8 |
| ԿՄ-01/12 | ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ 4 | 53-000318 | 16151 | d15 - 2 գծմ, d20 - 81 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.9 |
| ԿՄ-01/14 | ք. Արմավիր, Աբովյան 137/1 | 61-000278 | 21767 | d20 - 3 գծմ, d25 - 10 գծմ, d32 – 67 գծմ | ՋԿ – 3 հատ | 6 | Նոյեմբեր | 4.10 |
| ԿՄ-01/15 | գ. Բաղրամյան, Բաղրամյան1 | 63-000033 | 12650 | d15 - 4 գծմ, d20 - 6 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.11 |
| ԿՄ-01/13 | ք. Ճամբարակ, Պ. Սևակի 7 | 57-000066 | 12752 | d20 - 12 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.12 |
| ԿՄ-01/23 | ք. Մարտունի, Շահումյան 2 | 82-000235 | 9143 | d15 - 1 գծմ, d20 - 50 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.13 |
| ԿՄ-01/18 | ք. Վարդենիս, Ռոմանի 7 | 83-000091 | 13174 | d15 - 6 գծմ, d20 - 15 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.14 |
| ԿՄ-01/19 | ք. Վանաձոր, Նժդեհի 14 | 31-000261 | 18663 | d25 - 15 գծմ, d32 - 95 գծմ, d57 – 15 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.15 |
| ԿՄ-01/17 | ք. Տաշիր, Վ.Սարգսյան թ.6 թիվ 95 | 35-000042 | 12752 | d20 - 12 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.16 |
| ռԿՄ-01/08 | ք. Եղվարդ 2401, Կնունյանց 1-ին նրբ. 38/1 | 46-000109 | 12321 | d20 - 3 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.17 |
| ԿՄ-01/07 | ք. Չարենցավան, Աբովյան 8 | 42-000167 | 16106 | d20 - 3 գծմ, d32 - 73 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.18 |
| ԿՄ-01/22 | Շիրակի մարզ, գ. Ամասիա, փ.25 շ.4 | 27-000058 | 18189 | d15 - 3 գծմ, d25 - 8 գծմ | ՋԿ – 2 հատ, | 12 | Նոյեմբեր, | 4.19 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ԿՄ-01/06 | գ. Աշոցք, Հրապարակ 1 | 27-000022 | 6800 | d25 - 2 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.20 |
| ԿՄ-01/21 | ք. Արթիկ, Ազատության հապարակ 1/2 | 23-000047 | 12409 | d15 - 5 գծմ | ՋԿ – 1 հատ, ԳՕ-1 հատ | 12 | Նոյեմբեր, Մայիս | 4.21 |
| ԿՄ-01/05 | ք. Մարալիկ, Մադաթյան 1 | 25-000011 | 14906 | d20 - 5 գծմ, d32 - 48 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.22 |
| ԿՄ-01/16 | ք. Նոյեմբերյան, Անդրանիկի 3 | 73-000088 | 15293 | d15 - 3 գծմ, d32 - 49 գծմ, d40 - 8 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.23 |
| ԿՄ-01/24 | ք. Սպիտակ, Ռփյան 54 | 36-000101 | 12582 | d15 – 1.5 գծմ, d20 - 7 գծմ | ՋԿ – 1 հատ, ԳՕ-1 հատ | 12 | Նոյեմբեր, Մայիս | 4.24 |
| ԿՄ-01/25 | ք.Գավառ, Զ.Անդրանիկ | 81-000218 | 7816 | d20 – 15 գծմ, d25 - 8 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.25 |
| ԿՄ-01/26 | ք.Երևան, Բատիկյան փ 99 շենք1 | 16-007615 | 8616 | d32 – 27 գծմ, d57-10 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.26 |
| ԿՄ-01/27 | ք.Երևան Մանանդյան 2/1 | 18-008414 | 9697 | d50-55 գծմ | ՋԿ – 1 հատ | 6 | Նոյեմբեր | 4.27 |
| ԿՄ-01/28 | ք. Հրազդան, Միկրո. 13փ. 24/2 | 41-000509 | 12369 | d20 – 4 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.28 |
| ԿՄ-01/29 | գ.Ծաղկահովիտ Բժշկական փ. 9/6 | 93-000148 | 12769 | d20 – 12 գծմ,d25 -10 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.29 |
| ԿՄ-01/30 | գ.Ախուրյան Գյումրու խճ. 42 | 22-000133 | 12752 | d20 – 12 գծմ | ՋԿ – 2 հատ | 6 | Նոյեմբեր | 4.30 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

------------------------------Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«ԷՅ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 141ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470102214780130
ՀՎՀՀ 00930884

------------------------------Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 2*
*« 20 » «ապրիլի » 2018թ. կնքված*
*ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ-18/12 ծածկագրով պայմանագրի հիման վրա*
*«07» « 02 » 2020թ. կնքված թիվ 2 համաձայնագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| h/h | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 76131100-1 | <u>գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկման և հրահանգավորման ծառայություններ</u> | 43500 | 43500 | 43500 | 152210 | 452210 | 152210 | 261000 | 261000 | 261000 | 434873 | 434873 | 434873 | 434873 |

*/Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով,*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Սոցիալական ապահովության ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

---------------------------Հ.ԳԵՎՈՐԳՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ
ք. Երևան, Չարենցի 141ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2470102214780130
ՀՎՀՀ 00930884

---------------------------Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
/ստորագրություն/
Կ.Տ